ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՏԵՆԱԳՈՍՈՒԹՅՈՒՆ.

Ռ. Լ. ՄԱՆԱՍԵՐՅԱՆ, Տիգրան Մեծ. Հայաստանի պայքարը Հռոմի և Պարթևաստանի դեմ, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1987, 240 էջ։

Հայ ժողովրդի հին պատմության առավել կարևոր փուլերից մեկը Տիգրան Մեծի դահակալության շրջանն է, երբ հայոց արքան, իր իշխանության տակ հայկական բոլոր հողերը միավորելուց հետո, նվաճեց հարևան մի շարք երկրներ ևս, որով հայկական պետականությունը դուրս եկավ Մեծ Հայքի բնական-աշխարհագրական սահմաններից ու դարձավ բաղմազգ մի տերություն, անմիջական շփման մեջ մտնելով ժամանակի երկու մրցակից տերությունների՝ Հռոմի և պարթևական Պարսկաստանի հետ։ Դրանով իսկ Հայաստանը դարձավ համաշխարհային պատմական գործընթացի վրա ազդող կարևորագույն գործոն։ Ուստի, միանգամայն օրինաչափ է, որ Տիգրան Մեծի թագավորության տարիների պատմությանը անդրադարձել են դեռևս դեպքերին համարյա ժամանակակից անտիկ պատմիչները (Ստրաբոն, Հովսեպոս Փլավիոս, Պլուտարքոս, Դիոն Կասսիոս և ուրիշներ), քաղաքական գործիչները (Կիկերոն), ինչպես նաև նոր ժամանակների պատմաբանները՝ օտար, թե հայրենական։

Առաջին հայացքից կթվար, թե Տիգրան Մեծի թագավորության պատմությունն արդեն լիովին ու բազմակողմանի ուսումնասիրվել է և ասվածին ու գրվածին հնարավոր չէ նոր բան ավելացնել։ Բայց ահա լույս է տեսել մի նոր մենագրություն՝ նվիրված Տիգրան Մեծի արտաքին և ներքին քաղաքականությանը, որտեղ հեղինակը՝ պատմական գիտությունների թեկնածու Ռ. Լ. Մանասերյանը, սկզբնաղբյուրների և գոյություն ունեցող մասնագիտական գրականության մանրակրկիտ ուսումնասիրությամբ ցույց է տալիս, որ դեռևս կան ուսումնասիրման և ճշգրտման ենթակա մի շարք կարևոր հարցեր։ Հեղինակը իրավամբ նշում է, որ անվիճելի են Տիգրանի ժամանակաշրջանի պատմության հետազոտման կարևորությունն ու դիտական ակտուալությունը։ Դրանք էլ ավելի անհրաժեշտ են դառնում, եթե նկատի ունենանք նախորդ աշխատություններում չբացահայտված մի շարք կարևոր պրոբլեմներ, Տիգրանի գործունեության վերաբերյալ հայտնաբերված նոր փաստերը, հելլենիստական ժամանակաշրջանի հետազոտման մեջ սովետական և արտասահմանյան պատմագիտության նվաճումները։ Հետազոտության մեջ քննվում են Տիգրան Մեծի արտաքին և ներքին քաղաքականությունը, հելլենիստական Արևելքում միջազգային հարաբերությունների պատմության հարցերը։ Փորձ է արվում լուսաբանել հայ ժողովրդի և նրա հարևանների հին պատմության մի կարևոր հատված, որը պատմագիտության մեջ իրավամբ անվանվում է Տիգրան Մեծի ժամանակաշրջան։

Գրքի «Սկզբնաղբյուրներ և ուսումնասիրություններ» հատվածում տրված է հարցին առնչվող առկա գրականության գնահատականը։ Հեղինակը իրավացի քննադատում է Թ. Մոմզենի և Թ. Ռեյնակի միտումնավոր վերաբերմունքը Տիգրան Մեծի նկատմամբ։ Այդ հեղինակներին դեռևս ժամանակին քննադատել է Հ. Մանանդյանը, այսուհանդերձ, Ռ. Մանասերյանը նշում է, որ վերջինս որոշ հարցերում չի կարողացել հաղթահարել Թ. Ռեյնակի աշխատություններից սկիզբ առնող տեսակետների ազդեցությունը։

Ուսումնասիրությունը բաղկացած է վեց գլխից։ «Հռոմի և Պարթևստանի էքսպանսիան Մերձավոր Արևելքում մ. թ. ա. II դարում։ Տիգրանը պարթևների պատանդ վերնադիրը կրող առաջին գլխում քննված են Հռոմի և Պարթևստանի էքսպանսիաների պատճառները և ցույց է տրված, որ մ. թ. ա. II դարից սկսած Հռոմը և Պարթևստանը միջազգային ասպարեզում հանդես եկան որպես գլխավոր ուժեր, որոնք ավելի ու ավելի վճռական ազդեցություն էին գործում Արևելյան Միջերկրածովքի հելլենիստական պետությունների ճակատագրերի վրա։

Երկրորդ գլուխը նվիրված է Կապադովկիայում Հռոմի առաջխաղացման դեմ մ. թ. ա. 83—91 թթ. Տիգրան Բ-ի մղած պայքարին և մ. թ. ա. 92 թ. տեղի ունեցած հռոմեա-պարթևական բանակցություններին։ Այն ավարտվում է հայ-պարթևական պատերազմի հետ կապված հարցերի քննմամբ։ Հեղինակի ճշմարիտ կարծիքով հռոմեական գերիշխանության և արտաքին քաղաքական ազդեցության հաստատումը Կապադովկիայում Հայաստանի արևմտյան սահմաններում սպառնալիք էր ստեղծում վերջինիս անկախությանը։ Նա շեշտում է, որ Կապադովկիայի անցումը Հռոմի վերահսկողության տակ խիստ վատթարացնում էր Հայաստանի ընդհանուր ստրա-

ունգիական վիճակը, որովհետև այդպիսի պարագայում Հայաստանը շրջափակվում էր արևմուտքից՝ Հռոմից կախյալ տարածքներով և Կապադովկիայի նկատմամբ պրոտեկտորատ սահմանելով։ Հռոմը դրանով իսկ ճանապարհ էր հարթում դեպի Հայաստան։ Տիգրանը կանխում էր այդ վտանգը. «նա վճռել էր կանգնեցնել Հռոմի վտանգավոր տարածումը Փոքր Ասիայի խորքը, թույլ չրտալ Հռոմին Հայաստանի սահմանում ստեղծել և ամրապնդել իր առաջխաղացման հենակետը» (էջ 39)։

Անդրադառնալով Տիգրանի և Միհրդատ Պոնտացու հարաբերություններին այս շրջանում, հեղինակը իրավացիորեն նշում է, որ միահամուռ լինելով իրենց գլխավոր նպատակում՝ Կապադովկիայում հռոմեական ազդեցության վերացման խնդրում, Պոնտոսը և Հայաստանը մնացած բոլոր հարցերում ունեին տարբեր դիրքորոշում։

Մենագրության երրորդ գլխում, որն ունի «Տիգրան Բ-ի տերությունը (83—69 թթ.)։ Սելևկյանների ռազմական ելույթը (73—69 թթ.)» վերնագիրը, հեղինակն անդրադառնում է Արևելյան Միջերկրածովքում Տիգրան Մեծի արտաքին քաղաքական ձեռնարկումներին և դրանց հետևանքով առաջացած լայնածավալ տերության բնույթի հարցին։ Այստեղ նշված է, որ մ. թ. ա. I դարի 80—70-ական թվականներին Առաջավոր Ասիայի արևմտյան ընդարձակ երկրամասերը միավորված էին մի տերության մեջ՝ հայոց թագավոր Տիգրան Մեծի իշխանության ներքո։ Հեղինակը եզրակացնում է, որ Տիգրանի ստեղծած տերությունը Արևելյան Միջերկրածովքում վերջին պատնեշն էր Հռոմի անսահմանափակ տիրապետության ճանապարհին (էջ 58)։ Այս առթիվ հեղինակը, առաջինը պատմագիտության մեջ, հանգում է այն հետաքրքիր եզրակացության, որ Տիգրանի այդ նորաստեղծ պետությունը ստեղծվել էր Հայաստանի և նախկին Սելևկյան թագավորության միապետական ունիայի հետևանքով։ Նա գրում է, որ մ. թ.ա. 83 թ. կայացավ Հայաստանի և Սիրիայի միավորումը ընդհանուր միապետի իշխանության ներքո և Սիրիայի հելլենիստական թագավորությունում Հայաստանի արքայի գահակալելը «ժողովրդի»՝ միացյալ պոլիսների հրավերով պետական-իրավական տեսակետից բնութագրում է որպես ունիա Հայաստանի և Սիրիայի միջև և եզրակացնում, որ 83 թ. դրված էր «սիրիական հելլենիստական թագավորության վերականգնման, նրա գոյության պահպանման և ամենևին ոչ նրա վերացման հարցը» (էջ 74—75)։ Հեղինակի կարծիքով, հայկական և սիրիական հասարակությունների դասակարգային կառուցվածքի տարասեռ լինելը կանխորոշում էր երկու երկրներում պետության ֆունկցիաների ծավալների տարբերությունը։ Սիրիայում Տիգրանի միապետությունը գլխավորապես կատարում էր պահպանական ֆունկցիա, Հայաստանում՝ նաև տնտեսական-կազմակերպչական (էջ 95)։ Անդրադառնալով Տիգրանի տերության բնույթի հարցին, հեղինակը իրավացիորեն գտնում է, որ այդ տերությունը հիմնվում էր երկու սոցիալ-քաղաքական նեցուկների՝ իշխող դասակարգերի փոխգործողության վրա, որոնցից մեկը՝ հայ ավագանին, արևելյան էր, իսկ մյուսը՝ հելլենական և հելլենաարամեական, պոլիսային վերնախավ, և այդ տերությունը բնութագրում է որպես հելլենիստական պետություն (էջ 96)։

Չորրորդ գլխում քննվում են 73—71 թթ. հռոմեա-պոնտական պատերազմում Հայաստանի չեզոքության հարցը, ինչպես նաև Տիգրանի վարած քաղաքականությունը Հռոմի հանդեպ 71—69 թթ.։ Ռ. Մանասերյանը գտնում է, որ Տիգրանի վարած չեզոքության քաղաքականությունը բրիում էր Հայաստանի շահերից և այն միանգամայն արդարացված էր։ Այս գլխում հեղինակին հաջողվել է տալ Միհրդատ Պոնտացու պարտության քաղաքական հիմնավորումը (էջ 120)։

«Պատերազմ Հռոմի դեմ (69—67 թթ.)» գլխում խոսվում է հռոմեացիների դեմ Տիգրանի մղած պատերազմական գործողությունների մասին, որոնց հետևանքով Տիգրանին, այնուամենայնիվ, հաջողվեց այն, ինչը չէր հաջողվել Հռոմի դեմ հանդես եկած որևէ այլ ախոյանի։ Ճիշտ է, Տիգրանը կորցրեց իր արտաքին նվաճումները, բայց կարողացավ անառիկ պահել իր երկիրը. մինչդեռ Հռոմի դեմ հանդես եկած բոլոր երկրները կորցրին իրենց անկախությունը և դարձան հռոմեական տիրույթներ։

Վերջին գլխում («Հայաստանի հարաբերությունները Հռոմի և Պարթևստանի հետ 66—64 թթ.») հեղինակը ցույց է տալիս, որ Տիգրանը, ծավալելով ակտիվ դիվանագիտական գործունեություն, կարողացավ իր երկիրը գրեթե անվնաս դուրս բերել ստեղծված ճգնաժամային գրությունից։

Վերջաբանում, տալով Տիգրանի գործունեության ընդհանուր գնահատականը, Ռ. Մանասերյանը նշում է. «68—66 թթ. Հայաստանի... վերընթաց զարգացումը չխախտվեց... Տիգրանը պաշտպանեց հայկական պետությունը ոչնչացման վտանգից։ Այստեղ առավել, քան երբևէ, կարևոր էր Տիգրանի գիտակից, անձնական ջանքերի դերը։ Նա պատկանում է ժողովուրդների պատմության այն կարկառուն քաղաքական գործիչների շարքին, որոնք իրենց երկրի համար մեծագույն վր-

տանգի պահին կանխում են օտար տիրապետության հաստատումը։ Պահպանելով խաղաղություն, նա իր հակառակորդ տերություններից, նախ և առաջ Հռոմից ձեռք բերեց Հայոց թագավորության գոյության իրավունքի ճանաչումը, դրանով իսկ ապահովելով հայ ժողովրդի հետագա զարգացման ու կոնսոլիդացման պայմանները» (էջ 240)։

Այս արժեքավոր ուսումնասիրության մեջ նկատելի են նաև որոշ անճշտություններ, որոնցից կարելի էր խուսափել ուշադիր գիտական խմբագրման դեպքում։ Այսպես, նույն՝ 43-րդ, էջում Կոմմագենե երկիրը տարածված է մեկ Եփրատի արևելյան ափին, մեկ՝ արևմտյան (ճիշտը վերջինն է)։ «Փողերանոց» բառին փոխարինել է «դրամատունը», որը սխալ է (էջ 56, 96)։ Կան անունների տառադարձության սխալներ. օրինակ՝ Գալիս գետ (էջ 200), պետք է լինի՝ Հալիս կամ Ալիս, Լաոդիկեա քաղաք (էջ 72), պետք է լինի Լաոդիկիա, Պտղոմեոս Սոթեր (էջ 92), պետք է լինի՝ Սոտեր։ 92-րդ էջում հեղինակը նշում է, որ Հայաստանը Միջերկրածովքի մարդաշատ և զարգացած երկրների համեմատ խիստ սակավաբնակ էր։ Նա մոռացել է երևի, որ Խորենացին (գիրք Ռ, գլ. ԾԶ), խոսելով դեռևս Արտաշեսի ժամանակի Հայաստանի մասին, նշում է, որ նա մեր աշխարհը բազմամարդացրեց։ Գրքի գիտական արժանիքը առավել կբարձրանար, եթե վերջում այնուհանար հատուկ անունների ցանկ։

Վերջացնելով դարձյալ նշենք, որ լույս է տեսել գիտական անժխտելի արժանիքներով մի ուսումնասիրություն, որի կողքով արդեն չի կարող անցնել Հայաստանի և Մերձավոր արևելքի հին պատմությունն ուսումնասիրող պատմաբանը։

ՍԻՄՈՆ ԿԻՐԿՈՍՇԱՐՅԱՆ
պատմական գիտությունների դոկտոր